Եղվարդի Ս.Նշան եկեղեցի

Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի կենտրոնական մասում կանգուն է Ս.Աստվածածին (Ս. Նշան) երկհարկ եկեղեցի-դամբարանը՝ կառուցված 1301թ.-ին:
Համեմատաբար զուսպ մշակված առաջին հարկը հարկաբաժան գոտիով առանձնանում է զարդապատկերաքանդակների առատությամբ աչքի ընկնող երկրորդ հարկից: Յուրաքանչյուր ճակատի կենտրոնում սյուժետային պատկերաքանդակներ են՝ եղջերու հոշոտող հովազ, քարայծ, արծիվ՝ հորթը ճանկերում: Առավել ուշադրություն է դարձված արևմտյան ճակատին, որտեղ զարդաքանդակներով մուտքից վեր Աստվածածնի և սրբերի պատկերաքանդակներն են: Քանդակների մեծ մասը ներկված է եղել: Հարդարանքի առանձնահատկություններից է զարդանախշ գոտին՝ կազմված քառակուսի, ութանիստ և ութանկյուն աստղաձև հախճասալերից, որոնց վերին ստորին հատվածները զարդարված են ոճավորված արմավենիով, իսկ մեջտեղում պատկերված են նապաստակ, ընձառյուծ, գայլ, քարայծ, օձ, եղջերու, կարապ և այլ կենդանիներ: Սալերը պատկանում են XIII-XIVդդ. արվեստին և տեղադրվել են եկեղեցու կառուցումից հետո: